

տուրքն ալ իւր կարգին, մանաւանդ մանի-
ֆակտուրի էջին վերայ զգալի բաց մը պիտի
ունենայ: Գիւղացին ապրելու կամ իւր պարտ-
քերը վճարելու համար պիտի ստիպուի ծա-
խել իւր կենդանիները և շատ անգամ հողե-
րը որով յաջորդ տարի սովորականէն քիչ
սերմ պիտի ցանուի և արտադրութիւնը քիչ
պիտի լինի: Այս բոլոր պայմաններուն մէջ
յայտնի է որ ժողովրդի հարստութիւնը պի-
տի ջնջուի և երկրի նիթական բարօրութիւ-
նը առ հասարակ վտանգի կենթարկուի:
Պահ մը ենթադրենք որ Թուրքիա՝ ընդունած
ըլլալով պաշտպան դրութիւնը, ընդունած ըլ-
լար նաև քարիթալիզմի դրութիւնը, որով
երկրի մէջի գրամատերերը շահէին և գրա-
մագլուխները հետզհետէ բազմանային: Պիտի
տեսնենք որ վարձակալութեան այս պայման-
ներուն մէջ գրամատերերու մէկ աննշան մա-
սը կը շահի: Միւլթէղիմներու մեծ մասը յոյ-
սը կը գնէ ցորենի գնին բարձրացման վերայ
և մինակ ամենամեծ գրամագլխի տէրերը կըր-
նան իրենց ցորենը քանի մը տարիներու հա-
մար պահել, առիթէն օգտուելու համար:
Այս մարդիկ իւրաքանչիւր զաւառի մէջ բնա-
կիչներու թուին 1000-ին 1-ը կրներկայացնեն,
հետեաքար աշարի ներկայ դրութենէն՝ 1000
բնակչի վերայ մի հողի կը շահի: Ընդհակա-
ռակը երբ տասանորդի վարձակալութիւնը
գիւղացիներուն մնայ, ասոնք ամեն տարի
100-ին 20—30 շօշափելի նիւթական շահ
մը կունենան: Միւս կողմէն իրենց գիւղին
տէրն ըլլալով կը քաջալերուին և յաջորդ տա-
րուան ցանքը կաւելցնեն, իրենց տուրքերն ու
պարտքերը կանոնաւորապէս և աստիճանաբար
կը վճարեն, աւելի մեծ քանակութեամբ ա-
ռուստուր կընեն, և տարիներու ընթացքի մէջ
ամեն տուն պզտիկ հարստութիւն մը կը շինէ,
որ առատ վարուցանքի հողերէ, բազմաթիւ
աշխատող և կաթնտու կենդանիներէ և անոնց
արամադրելի արդիւնքներէն պիտի բաղկա-
նայ: Հետեաքար Կայս. կառավարութեան
ձեռք առած այս թոյլատրող միջոցները, շատ
օգտակար պիտի լինին, թէ գիւղացիներու
թէ երկրին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ԲԱՆԴԱՆԻՔ Ի ԿՈՆՏԱՆՍՏՆՈՒԼԻՆՔ ԶԵՏԱՊԱՆԻՔ.

Կոնստանտինոպոլի Ս. Էջմիածնի,
որով Տ. Թովմայ վարդապետն կարգի վանահայր
Մոզնոյ Ս. Դէորդայ վանուց և միանգամայն
գործակալ Աշտարակայ և Ապարանայ, ի տեղի
Տ. Թովհաննէս վարդապետի Դպիր Վարդա-
նեան: Թ. 669.

— Եանուէն Տ. Թովհան քահանայի Ման-
դակունւոյ ի Սուշավա (Բուկովինայ), որով
շնորհի նմա ծաղկեայ փիլոն մանիշակադոյն:
Թ. 671:

— Եանուէն Հոգեւոր Կառավարութեան
Կարուց, որով լուծեալ համարի պսակ Մ.
Թովհաննիսեան ընդ Թ. Ղուկասեան ի պատ-
ճառս թրքանալոյ առն, ըստ վկայութեան Ա-
ռաջն. Տեղապահի Կարնոյ: Թ. 677:

— Եանուէն Սինօղի Ս. Էջմիածնի, որով
Տ. Հմայեակ վարդապետն Տ. Սարգսեան կարգի
ի պաշտօն հաստատուն վանահայրութեան
Խոր—Վիրապի վանուց, իսկ Տ. Պօղոս վար-
դապետն Մալխասեան, ըստ խնդրանաց իւրոց,
միաբան նոյն վանուց. Թ. 693:

— Եանուէն Սիմէօնի Եղգարեան, որով
նա կարգի գանձապետ գանձանակադրամոց
Ս. Էջմիածնի ի Ս. Դէորդ եկեղեցւոյ Հին Նա-
խիջեանի: Թ. 719:

— Եանուէն Տ. Թովհաննէս վարդապետի
Շիրակունւոյ, որով նա ըստ խնդրանաց իւ-
րոց, փոխադրի ի պաշտօնէ փոխանորդութեան
վիճակին Հայոց Ալեքսանդրապօլու նոյն պաշ-
տօնիւ ի Դօրի: Թ. 729:

— Օրհնութեան յանուն այրի Տ. Ալէք-
սանդրայ Ղալուսեան ի Ս. Պետերբուրգ:
Թ. 747:

— Եանուան Տ. Ստեփաննոս քահանայի Սամուէլեան Նորաշէն եկեղեցւոյ Տփղեաց և Նոր—Բայազիտեան գնդին, որով շնորհի նմա պատիւ աւագ քահանայութեան. թ. 749:

— Եանուան Դեր. Տ. Պետրոս եպիսկոպոսի, առաջնորդին Սեբաստիոյ, որով ըստ միջնորդութեան Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, շնորհի նմա պատիւ Արքեպիսկոպոսութեան. թ. 751:

— Եանուան Տ. Եղիշէ վարդապետի Դուրեան, որով ըստ միջնորդութեան Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, շնորհի նմա խաչ լանջական ականակուռ. թ. 752:

— Օրհնութեան յանուան Ժողովրդոց Ռուսչուկ քաղաքի Բոլղարիոյ. թ. 762:

— Օրհնութեան յանուան Աւետար Դուրեան. թ. 771:

— Եանուան Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, որով յանձն լինի նմա յանձնել Տ. Եովհաննէս աւագ քահանայի Մկրեան Կ. Պօլսոյ զիոնդակ, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. թ. 773:

— Օրհնութեան յանուան Միրզաջանի Պատուականեան ի Շուշի. թ. 777:

— Եանուան Տ. Գարեգին վարդապետի Սաթուռեան, որով ըստ խնդրանաց նորա ազատ կացուցանի ի պաշտամանէ կառավարչի Թեմին Հայոց Արցախու. թ. 816:

ՍՏԱՅՈՒԼԺ ԳՐԱԵՐ.

Ոսկի շինողներ, Յշօկէ, թարգմ. ռուս. Սաչ. Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1897, զինն է 50 կ.:

Թռչունների աշանային տեղափոխութիւնը, Պրոֆ. Մ. Բողդանով, Թիֆլիզ, 1897, զինն է 5 կ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

- | | | |
|---------------------------------|-------|-----|
| 1. Հոն ՅԵՇԱՏԱՆՆԵՐ. | Կ. Կ. | 559 |
| 2 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶՐՈՆԻՅՈՆ | | 545 |

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԸՏՄԱԿԱՆ.

- | | | |
|---|--|-----|
| 5. Հայերէնի քերականութիւնը Հայերի | | |
| Հիւրշմանի Մ. Կ. | | 546 |
| 4. Հ. Գեղեցի, Համառօտութիւն Բիւզանդական կայսրների պատմութեան. (շարունակելի) Մ. Վ. | | 551 |

ՄԱՆԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

- | | |
|--|-----|
| 5. Սահմանափակ կրթութիւն. Գ. Ղ. | 561 |
| 6. ՄԱՆՐԱՂՈՐԶ | 566 |

ԱԶԳԱՅԻՆ.

- | | |
|-----------------------------------|-----|
| 10. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ | 568 |
| ՄԱՅՐ ԱԹՈՐ | |
| ՏԱԺԱՅԱՅԶ. | 569 |

ՊԸՇՏՕՆԱԿԱՆ-Բ. 576.

ՍՏԱՅՈՒԼԺ ԳՐԱԵՐ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՅԱԽԵՂՈՒԼԺ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

578